



ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մամուլի հաղորդագրություն

2021 թվականին իրականացված և 2022-ին նախատեսվող
աշխատանքների մասին

1. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2021 թվականին շարունակվել են ուռուցքաբանական հիվանդությունների վիրահատական և ոչ վիրահատական (քիմիաթերապևտիկ և ճառագայթային) բժշկական օգնության ծառայությունների, գլխուղեղի սուր կամ ենթասուր իշեմիկ կաթվածների թրոմբոլիտիկ բուժման և մեխանիկական թրոմբեկտոմիայի ծառայությունների, սրտի անհետաձգելի վիրահատական (Stent for Life) ծառայությունների տրամադրումը, արտագնա անհետաձգելի բժշկական օգնության արագ արձագանքման ծառայության կողմից պացիենտներին ուղղաթիռով տեղափոխման գործընթացը:

2. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքի շրջանակներում սահմանվել են արտամարմնային եղանակով ստացված և չօգտագործված սաղմի պահպանման, ոչնչացման, անհատույց տրամադրման հիմքերը և համաձայնության ձևի պահանջը, որի կարգը սահմանվելու է կառավարության կողմից: Օրենքի փոփոխությամբ հիմքեր են ստեղծվել մարզերում արհեստական սերմնավորման ծառայությունների զարգացման համար, որի արդյունքում զգալիորեն կբարձրանա ծառայության մատչելիությունը, ինչպես նաև՝ դոնորների

ռեգիստրի ստեղծման համար, որի արդյունքում կապահովվի վերջիններիս նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների վերահսկելիության բարձրացումը, ընդլայնվել են անպտղությամբ տառապող ընտանիքների, անձանց՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնությունից օգտվելու հնարավորությունները: Այս ամենը ևս մի խթան է՝ ժողովրդագրական իրավիճակի բարելավման գործում: Արդեն իսկ սահմանվել են դոնորին ներկայացվող լրացուցիչ պահանջները, որոնք հնարավոր կլինի վերահսկել էլեկտրոնային առողջապահության համակարգում ստեղծվող տվյալների բազայի միջոցով:

3. Հայաստանի և ՌԴ առողջապահության նախարարությունների համագործակցության շրջանակներում կազմակերպվել են մանկաբուժության, նեոնատոլոգիայի և ծննդօգնության ոլորտում ներգրավված 75 մասնագետի՝ մարզային շեշտադրմամբ, վերապատրաստումներ Ռուսաստանի Դաշնության առաջատար կլինիկաներում, ինչպես նաև 75 նեոնատոլոգի, մանկաբարձ-գինեկոլոգի վերապատրաստում Երևանում՝ ՌԴ ԱՆ Վ.Ի.Կուլակովի անվան մանկաբարձության, գինեկոլոգիայի և պերինատոլոգիայի ազգային բժշկական հետազոտական կենտրոնի մասնագետների կողմից:

4. Ընդլայնվել է վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեցող շահառուների ցանկը՝ 44-օրյա պատերազմի ընթացքում կամ ավարտից հետո մարտական գործողություններին մասնակցության հետ կապված պատճառական կապով զոհված (մահացած) զավակի ծնողները ներառվել են ծրագրում: 2021 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում ծնվել է 76 երեխա, որից 2-ը՝ 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների ընտանիքներում, գրանցվել է 211 հղիություն, որից 27-ը՝ զոհված զինծառայողների մայրեր են, սպասարկվել է 857 շահառու:

5. Առաջին անգամ Հայաստանում ստեղծվել է մանկական քաղցկեղի առաջին պալիատիվ ծառայությունը և պալիատիվ (ամոքիչ) բժշկական օգնության բաժանմունքը՝ 5 մահճակալով:

6. Նաև բացվել է միջազգային պահանջներին համապատասխան մանկական հոգեբուժական՝ 12 մահճակալով բաժանմունքը, որը ապահովված է համապատասխան որակավորում ունեցող մասնագետներով:

7. Շահագործման է հանձնվել Սևանի մանկական վերականգնողական կենտրոնը, որը կապասարկի հաշմանդամ և զարգացման խնդիրներով երեխաներին:

8. 0,5%-ով նվազել է մինչև 5 տարեկան երեխաների մահացության ցուցանիշը՝ 2020 թվականին 11 ամսվա կտրվածքով այն կազմել է 8,3%, իսկ 2021 թվականի նույն ժամանակահատվածում՝ 7,8%:

9. «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքը փուլ առ փուլ կիրարկվում է:

10. Առողջ սնուցման ուղղությամբ՝ մասնավորապես սննդամթերքում հագեցած ճարպերի/ տրանսճարպերի, ազատ շաքարների և աղի քանակների սահմանափակմանն ուղղված միջազգային փորձի ուսումնասիրություն և համապատասխան միջոցառումներ են իրականացվել:

11. Ապրիլից մեկնարկել է COVID-19-ի դեմ պատվաստումների գործընթացը: Սեպտեմբերին պատվաստումների կտրուկ ավելացման շնորհիվ հնարավոր եղավ հաղթահարել հիվանդության առումով ստեղծված ճգնաժամային իրավիճակը Հայաստանում:

12. Մայիսի 5-ից COVID-19-ի դեմ պատվաստումային գործընթացը սկսել է իրականացվել նաև հանրային վայրերում՝ շարժական պատվաստումային կետերի միջոցով: Ելնելով արդյունավետությունից՝ շարժական պատվաստումային կետերը ընդլայնվել են և բացվել է թվով 8 կետ: Միաժամանակ իրականացվել են շարժական պատվաստումային

կետերի բուժաշխատողների վերապատրաստման դասընթացներ: Այս պահի դրությամբ գործում է թվով 6 շարժական պատվաստումային կետ:

13.Ներդրվել և գործարկվել է պատվաստանյութերի և պատվաստումների օժանդակ պարագաների պահուստների էլեկտրոնային կառավարման համակարգը՝ պատվաստանյութերի և պատվաստումների օժանդակ պարագաների արդյունավետ կառավարման նպատակով:

14.Կորոնավիրուսային հիվանդության պայմաններում պահպանվել է իմունականխարգելման գործընթացի կայունությունը, բարելավվել է մեկ տարեկան երեխաների շրջանում Իմունականխարգելման Ազգային ծրագրով նախատեսված պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշը (2020 թվականի համեմատությամբ աճել է 2%-ով՝ կազմելով 91%):

15.Հանրապետությունում պահպանվել է կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով համաճարակային կայուն իրավիճակը: Տարվա ընթացքում չեն գրանցվել կարմրուկի, կարմրախտի, համաճարակային պարոտիտի դեպքեր, երկիրը պահպանել է պոլիոմիելիտից ազատ գոտու կարգավիճակը, իսկ կապույտ հազի դեպքերը եզակի են:

16. Ռեֆերենս լաբորատոր կենտրոնում ներդրվել են հարուցիչների մոլեկուլային գենետիկ հետազոտությունները՝ սեքվենավորման մեթոդաբանությամբ: Մասնավորապես, իրականացվել է COVID-19 վիրուսի սեքվենավորում, ինչի արդյունքում հայտնաբերվել է «Դելտա», իսկ 2022թ.՝ նաև «Օմիկրոն» տարբերակները:

17.Պետական բյուջեից կենտրոնացված կարգով թվով 10 հիվանդության և 152.463,0 շահառուի համար ձեռք է բերվել 58 անվանում դեղ:

18. Դեղորայքը տրամադրվել է ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց, ծրագրի հիմնական շահառուներին՝

ըստ հետևյալ հիվանդությունների. հոգեկան, էպիլեպսիա, չարորակ նորագոյացություններ (հակաուռուցքային դեղեր, ցավազրկող դեղեր, թմրադեղեր): Մանկական օնկո-հեմատոլոգիական հիվանդություններով երեխաների և դեռահասների բուժման համար 2021 թվականին ձեռք է բերվել 23 անվանում ուռուցքաբանական դեղ, որոնք անվճար տրամադրվել են համապատասխան հիվանդներին: Հեմոֆիլիայով հիվանդների բուժման կազմակերպման համար անհրաժեշտ մարդու արյան մակարդման 8-րդ և 9-րդ գործոնների դեղապահովում: Կրծքագեղձի քաղցկեղի ախտորոշմամբ շուրջ 195 հաշվառված պացիենտի (68%-ը՝ 28-50 տարեկան, 11%-ը՝ 50-60 տարեկան, 21%-ը՝ 60-65 տարեկան) անվճար տրամադրվել է շվեյցարական նոր սերնդի, թանկարժեք «Տրաստուզումաբ 600մգ» (հերցեպտին) դեղը՝ յուրաքանչյուրին ամբողջ բուժման համար անհրաժեշտ քանակով, ինչի շնորհիվ բարելավվել է նրանց կյանքի որակը: Մինչև 22 տարեկաններ 820 հաշվառված ինսուլինոկախյալ երեխաների և երիտասարդների անվճար տրամադրվել են ինսուլինային անալոգներ և ինսուլինային գրիչներարկիչներ: Ինսուլինակախյալ երեխաների կյանքի որակը բարձրացնելու և նրանց առողջական վիճակը բարելավելու նպատակով առողջապահության նախարարության կողմից առաջին անգամ ձեռք է բերվել «Գլյուկագոն 1 մգ» դեղը, որն անվճար տրամադրվել է Հայաստանում և Արցախում հաշվառված շուրջ 763 ինսուլինակախյալ մինչև 18 տարեկան երեխաներին: Պարբերական հիվանդություն ունեցողներն ապահովվել են կոլխիցինով կամ համարժեք այլ դեղերով, քրոնիկ երիկամային անբավարարությամբ անձանց (երիկամային փոխպատվաստման և (կամ) ծրագրային հեմոդիալիզի դեպքում) ևս հատկացվել են անհրաժեշտ դեղերը: Ֆենիլկետոնուրիա (ֆենիլալանին չպարունակող մանկական կերեր)՝ մինչև 18 տարեկան երեխաների և դեռահասների 4 տեսակ հատուկ կերերի ապահովում, անհաս նորածինների շնչառական խանգարման համախտանիշ, «հիպոֆիզային գաճաճություն» ախտանիշ ունեցող շուրջ 61 երեխայի, յուրաքանչյուրին

անհրաժեշտ քանակով, անխափան տրամադրվել է աճի հորմոն դեղը՝ համապատասխան գիրչով: Հեպատիտ «Ց» ունեցող շուրջ 1000 հիվանդի անխափան տրամադրվել են հակավիրուսային նորագույն դեղեր:

19. Կորոնավիրուսային հիվանդությամբ պացիենտների բուժումը կազմակերպելու համար իրականացվել է ինտեսվիվ թերապիայի և վերակենդանացման բաժանմունքում օգտագործվող, նաև հակավիրուսային մի շարք թանկարժեք դեղերի և բժշկական նշանակության ապրանքների ձեռք բերում: Երեխաների մոտ «Կավասակի» հիվանդությունը կանխելու և բուժելու նպատակով ձեռքբերված նորագույն սերնդի դեղերը տրամադրվել են անվճար:

20. Նպատակային կլինիկական օրդինատուրայի ծրագրով 2021-ին ավարտել է 40 բժիշկ-մասնագետ, որից 32-ը նշանակվել են աշխատանքի, 3-ը՝ ընթացքում են, 5-ը՝ հետաձգվել է տարբեր պատճառներով: 2021 թվականին նպատակային կլինիկական օրդինատուրայի ծրագրով հատկացվել է 58 տեղ, որոնք ամբողջությամբ համալրվել են:

21. Մարզային բժշկական կենտրոնների հրատապ պահանջարկով ներկայացված կադրային բացը լրացնելու նպատակով 10-ը բժիշկ-մասնագետ ուղեգրվել է Կապանի, Մեղրու, Գորիսի, Ն.Նասիբյանի անվան Նոյեմբերյանի, Վեդու բժշկական կենտրոններ:

22. Շարունակվել են սքրինինգային հետազոտությունները: 2021 թվականի ընթացքում բնակչության ռիսկային խմբերում իրականացվել է շուրջ 440 հազար սքրինինգային հետազոտություն. կանանց մոտ իրականացվել է 28671 ՊԱՊ թեստի հետազոտություն, 108063 քաղաքացու մոտ՝ արյան մեջ քաղցի գլյուկոզի հետազոտություն և 285300 քաղաքացի անցել է զարկերակային գերճնշման հայտնաբերման սքրինինգ, ինչպես նաև հղիության 36-38 շաբաթական ժամկետում իրականացվել է 17920 մեզի և արյան երրորդ հետազոտություն:

23. Հաշվետու տարում մեկնարկել է կրծքագեղձի քաղցկեղի կանխարգելման ծրագիրը: Այն իրականացվելու է ՀՀ 3 սահմանամերձ՝

Լոռու, Տավուշի, Սյունիքի մարզերում՝ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ձեռքբերված շարժական մամոգրաֆի միջոցով: 19.01.2021թ.-25.12.2021թ. ընթացքում Վանաձորի, Գուգարքի, Սպիտակի և Ստեփանավանի տարածաշրջանների բնակավայրերի 50-69 տարեկան 6936 կին անցել է կրծքագեղձի մամոգրաֆիկ անվճար հետազոտություն: Ախտորոշումը հստակեցնելու նպատակով՝ 511 կին (7.7%) ուղեգրվել է լրացուցիչ հետազոտությունների: Ծրագրի մասնակիցների համար լրացուցիչ հետազոտությունները նույնպես իրականացվում են անվճար՝ Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի (ՈԽԱԿ) աջակցությամբ: 72 կնոջ (1.1%) մոտ կրծքագեղձի քաղցկեղի ախտորոշումը հաստատվել է և 66 հիվանդի տրամադրվել է անվճար մասնագիտացված բուժօգնություն: 2022-ի հունվարի 3-ից շարժական մամոգրաֆը գործում է Տաշիրի պոլիկլինիկայի տարածքում, փետրվարին այն կտեղափոխվի Ալավերդի, ապրիլին կտեղափոխվի Տավուշի մարզ, որտեղ կտեղակայվի մարզի բոլոր քաղաքներում, որից հետո՝ Սյունիքի մարզ:

24. Առողջապահական համակարգում մեկնարկել և իրականացվել են նախադեպը չունեցող ծավալի շինարարական աշխատանքներ՝ ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում: Մասնավորապես՝ ՀՀ պետական բյուջեի շրջանակներում մեկնարկել և իրականացվում են ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնի» մասնաշենքերի վերակառուցման, Սյունիքի մարզի Սիսիանի ԲԿ վերակառուցման, Կոտայքի մարզի Չարենցավանի ԲԿ վերակառուցման, Արագածոտնի մարզի Թալինի ԲԿ վերակառուցման և Ծաղկահովտի ԱԿ կառուցման, ինչպես նաև Արարատի մարզի Մասիսի ԲԿ կառուցման աշխատանքները:

25. Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող վարկային ծրագրերի շրջանակներում շարունակվել են Գեղարքունիքի մարզի Մարտունու ԲԿ նոր շենքի կառուցման շինարարական աշխատանքները, համաձայն 10.07.2020թ. կնքված պայմանագրի և ըստ

ժամանակացույցի՝ աշխատանքները կավարտվեն 2022թ. վերջին եռամսյակում: Կենտրոնը կհագեցվի անհրաժեշտ բժշկական կահույքով և սարքավորումներով:

26. Հուլիսին մեկնարկել են Վայոց ձորի նոր մարզային հիվանդանոցի կառուցման շինարարական աշխատանքները, որոնք կշարունակվեն 2022-ին:

2022թ. նախատեսվող աշխատանքներ

1. Առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) ներդրմանն ուղղված աշխատանքներ. հիմնական նպատակը պետության սոցիալական պատասխանատվության և բնակչության սոցիալական համերաշխության սկզբունքների հիման վրա առողջապահության կայուն ֆինանսավորման համակարգի ստեղծումն է, որը պետք է ապահովի բնակչության բոլոր խմբերի համար բժշկական հիմնական ծառայությունների ֆինանսական հասանելիություն և պաշտպանվածություն: ԱՀԱ Հայեցակարգը պետք է հիմք հանդիսանա առողջապահության նախարարության կողմից իրականացվող համալիր միջոցառումների հայեցակարգային մոտեցումներն ամրագրելու, առողջության համապարփակ ապահովագրության մասին օրենքը, այլ հարակից օրենսդրական փոփոխությունները մշակելու և 2023 թվականից առողջության համապարփակ ապահովագրությունը ներդնելու համար:

2. Առողջության առաջնային պահպանման օղակի բարեփոխումներ. աշխատանքային խումբը ձևավորվել է, որը կներկայացնեի առաջարկների փաթեթ՝ ուղղված ծառայության ուժեղացմանն ու վստահության բարձրացմանը, որակյալ ծառայությունների մատուցմանը:

3. Գլխուղեղի սուր կամ ենթասուր իշեմիկ կաթվածների թրոմբոլիտիկ բուժման ծրագրի աշխարհագրության ընդլայնում՝ ծառայության իրականացում նաև Գյումրու բժշկական կենտրոնում, ապա Վանաձորի ԲԿ-ում:

4. Իրականացվելու են երեխաների բուժօգնության համակարգի բարեփոխումներ, որի արդյունքում կրճատվելու են ամբուլատոր օղակից ստացիոնար օղակ անհիմն ուղորդումները: Դրան հասնելու համար կմշակվեն նոր չափորոշիչներ, կբարձրացվի առաջնային օղակի բուժանձնակազմի կրթական մակարդակը՝ դրանով իսկ նրանց հնարավորություն ընձեռելով զբաղվել բոլոր այն հիվանդություններով, որ միջազգային չափորոշիչների համաձայն իրականացվում են առողջության առաջնային պահպանման օղակներում: Լուծվելու են բոլոր խնդիրները, որոնք առկա են ստացիոնար բուժօգնության տրամադրման ֆինանսավորման գործընթացում, վերանայվելու է բուժման միջին տևողությունը, իրականացվելու են ճիշտ վերաբաշխումներ, թարմացվում է հիվանդանոցային բուժման ենթակա սուր հիվանդությունների ցանկը: Ամբողջական բարեփոխումների արդյունքում պացիենտն ունենալու է ամբուլատոր էլեկտրոնային քարտ և անձնական էլեկտրոնային սենյակ, որտեղ տեսանելի կլինեն բոլոր այցերը, հերթագրումները, և պացիենտները կխուսափեն ավելորդ հերթերից, իսկ բժիշկ-պացիենտ կապը կդառնա նաև ինտերակտիվ:

5. Մանկական պալիատիվ արտահիվանդանոցային պիլոտային ծառայության ստեղծում՝ Երևանի և մոտակա մարզերի շահառուների համար:

6. Առողջապահական ծառայությունների որակի բարելավման ռազմավարության և դրանից բխող միջոցառումների ծրագրի ընդունում.

ակնկալվող արդյունքը՝ բժշկական հաստատություններին որակի կառավարման մեխանիզմների, որակի շարունակական բարելավման գործիքների, որակի գնահատման ցուցանիշների տրամադրում, բնակչության բարձրորակ, անվտանգ բժշկական օգնության և սպասարկման տրամադրում:

7. Մշակվել և քննարկման փուլում են ««Դեղերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» և ««Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնց ընդունումը պայմանավորված է դեղերի շրջանառության կարգավորման ոլորտում առկա տարրնթերցումները բացառելու, առավել հստակ գործիքակազմի ներդրման, վերահսկողական գործառույթների արդյունավետ իրականացման, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդունված կանոններին ՀՀ օրենսդրությունը ներդաշնակեցնելու անհրաժեշտությամբ:

8. Հաշվի առնելով ««Եվրասիական տնտեսական միության շրջանակներում բժշկական արտադրատեսակների շրջանառության միասնական սկզբունքների և կանոնների մասին համաձայնագիրը» առանցքային փոփոխություններ են նախատեսվում բժշկական արտադրատեսակների շրջանառության պետական կարգավորումը սահմանող ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում: Նախագծերում ամրագրվել են նաև ոլորտի կարգավորման կանոնները հաստատող ԵԱՏՄ շրջանակներում մշակված և ընդունված մի շարք որոշումներ:

9. Ձեռնարկվում են միջոցառումներ ՀՀ ԱՆ դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի կարողությունների

հզորացման ուղղությամբ՝ ներառյալ լաբորատորիայի վերազինումը, կապիտալ վերանորոգումները և մասնագետների վերապատրաստումը, որի շրջանակներում կվերանայվեն նաև ծառայությունների վճարների չափերը, որոնք այս պահին զգալիորեն ցածր են ԵԱՏՄ մյուս անդամ երկրների համեմատությամբ:

10. Նախատեսվում են կառավարության համապատասխան որոշումների փոփոխություններ, ինչով հնարավորություն կստեղծվի լիարժեք ապահովելու զինծառայության ընթացքում ստացած խեղման, վնասվածքի, հիվանդության պատճառով զորացրված անձանց բժշկական օգնությունը և սպասարկումը: Մյուս փոփոխությամբ ակնկալվում է զինծառայողներին, հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողներին, զինծառայության ընթացքում ստացած խեղման, վնասվածքի, հիվանդության պատճառով զորացրված անձանց (բուժման սկզբից 3 ամսվա ընթացքում, մինչև բժշկասոցիալական փորձաքննության ուղեգրումը) վերականգնողական ծառայությունների փոխհատուցումն ամբողջությամբ իրականացնել «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքի» «Առողջապահություն» բաժնի «Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում:

11. ՀՀ պետական բյուջեի շրջանակներում հատկացված ֆինանսավորման հաշվին կմեկնարկեն ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի» մասնաշենքերի վերակառուցման, Արմավիրի մարզի Վաղարշապատի հիվանդանոցի վերակառուցման, Արագածոտնի մարզի Աշտարակի ԲԿ վերակառուցման, Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի Նաիրիի ԲԿ և Լոռու մարզի Տաշիր ԲԿ նոր շենքերի կառուցման աշխատանքները:

12. Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի կողմից հատկացված դրամաշնորհային միջոցների շրջանակներում կմեկնարկեն Լոռու մարզի Վանաձորի ԲԿ ինֆեկցիոն ծառայության համար նոր

մասնաշենքի կառուցման, ինչպես նաև Արմավիրի մարզի և Արարատի մարզի Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի մասնաճյուղերի վերակառուցման աշխատանքները:

13. Էլեկտրոնային առողջապահության համակարգի բարելավում. վճարովի հիմունքներով սպասարկվող բժշկական այցերի ԱՐՄԵԴ համակարգ մուտքագրման ապահովման արդյունքում համապատասխան հաշվետվողական և վերլուծական գործիքների մշակում, Covid 19 հակաժին թեստի արդյունքների ԱՐՄԵԴ համակարգ մուտքագրման հնարավորության ստեղծում և համապատասխան QR կոդի գեներացում, էլեկտրոնային անաշխատունակության թերթիկի ներդրում, էլեկտրոնային դեղատոմսերի ամբողջական ներդրում, պետական պատվերի շրջանակում իրականացվող բժշկական հետազոտությունների պատկերների պահպանման համակարգի (DICOM) ներդրում, օրգանների և հյուսվածքների դոնորների, արյան բանկի և հումանիտար դեղերի պահեստների կառավարման թվայնացված համակարգի ստեղծում, սոցիալական փաթեթի հասանելիության նպատակով էլեկտրոնային շտեմարանի ստեղծում, ախազորակոչային փորձաքննության համար էլեկտրոնային ուղեգրերի հնարավորության և փորձաքննության արդյունքների ԱՐՄԵԴ համակարգ մուտքագրման հնարավորության ստեղծում, հիվանդությունների էլեկտրոնային ռեգիստրների մշակում և ներդրում, էլեկտրոնային բժշկական ամբուլատոր քարտերի և պատմագրերի ներդրում, բժշկական գրանցամատյանների թվայնացում և այլն: Այս միջոցառումները հնարավորություն կտան հավաքագրել, թվայնացնել ու պահպանել տվյալները, զարգացնել ու կիրառել համակարգի հաշվետվողական, վերլուծական կարողությունները:

14. ՄԱԿ-ի զարգացման հիմնադրամի հետ համատեղ նախատեսվում է մոր և մանկան ոլորտում մատուցվող ծառայությունների, հղիների, երեխաների խնամքի, առավել տարածված հիվանդությունների և վիճակների վերաբերյալ տեղեկատվական/ խորհրդատվական առցանց

հարթակի ստեղծում, որի միջոցով ծնողը կստանա համապարփակ տեղեկատվություն բժշկական ծառայությունների, երեխայի խնամքի, պատվաստումային գործընթացի և երեխայի հիվանդությունների ժամանակ իր գործելակերպի վերաբերյալ:

15. Առաջիկայում կմեկնարկեն Ճապոնիայի կառավարության կողմից Հայաստանի առողջապահական համակարգին նվիրաբերված «TOYOTA» մականիշի շտապօգնության մեքենաների և ռեպինոմոբիլների արտադրական աշխատանքները: Ըստ ժամանակացույցի, մեքենաների հանձնումը Առողջապահության նախարարությանը նախատեսվում է ամռանը: